ՎԱՀԱՆ ՏՈՏՈՄՅԱՆՑԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Ն. ՍԱՐԻՆՑԱՆ

Վահան Տոտոմյանցը դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի նշանավոր անուններից է։ Նա բեղմնավոր գրիչ ուներ։ Կոոպերացիայի վերաբերյալ բազմաթիվ աշխատությունները հեղինակին լայն ճանաչում էին բերել ինչպես Ռուսաստանում, այնպես էլ եվրոպական երկրներում։ Ընդհանրացումներն ու փաստական վերլուծությունները Վ. Տոտոմյանցին դարձրին կոոպերատիվ մտքի հիշարժան տեսաբաններից մեկը։

Տնտեսական և սոցիալական ներհակությունների պրոբլեմը միշտ էլ ուղեկցել է հասարակության զարգացմանը և հասարակական միտքը միշտ էլ փորձել է լուծել կենսական հարցերը։ Առաջադրվել են ուսմունքներ ու ծրագրեր, որոնք միտում ունեին հարթելու այդ ներհակությունները պայմանավորող հանգույցները։ Դրանց իրագործման կոնկրետ հնարավորություններն ու գաղափարական միտումները պայմանավորում էին այդ ուսմունքների ուտոպիական կամ իրական բնույթը։ Վ. Տոտոմյանցը տարբեր առիթներով անդրադարձել է տնտեսական և սոցիալական ուսմունքների քննությանը։ Նրա կարծիքով ուտոպիական ուսմունքներն իբրև այդպիսին սկզբնավորվում են Թոմաս Մորով, որի աշխատությունը հանդիսանում է ոչ թե «գոյություն ունեցողի բարելավման Պլատոնի փիլիսոփայական դեղատոմսը, այլ գոյություն չունեցող պետության ֆանտաստիկական նկարագիրը»[1]։ Վ. Տոտոմյանցը չի համաձայնում գերմանացի պրոֆեսոր Ա. Ֆոյգտի այն սխեմային, ըստ որի ուտոպիականն ինչպես Ս. Սիմոնի, Շ. Ֆուրյեի և Ռ. Օուենի ուսմունքները, հողի ազգայնացման վերաբերյալ Հենրի Ջորջի ծրագիրը, այնպես էլ դիտական սոցիալիզմը։ Նրա կարծիքով, եթե առաջադրված այս կամ այն ուսմունքի դրույթները փորձով ստուգվում և հաստատվում են, ապա այն ուտոպիական կոչվել չի կարող։ Եվ որքան էլ ուտոպիական լինեն «նոր տնտեսական ու իրավական սկզբունքներով հասարակական և պետական ամբողջական վերակառուցման» վերաբերյալ Թ. Մորի, Թ. Կամպանելայի, Թ. Գերցկի, Ջ. Ռեսկինի «սոցիալական դրախտի» և կոմունիստական գաղութների այլ նախագծումները, դրանք բխում են առկա հասարակական-տնտեսական հարաբերությունների վերափոխման միտումից։ Վ. Տոտոմյանցը թեև նկատում էր Թ. Մորի ու Թ. Կամպանելայի հումանիստական գաղափարների և ուտոպիստ-սոցիալիստների հայացքները միացնող կապերը, այնուամենայնիվ, վերջիններիս դնում էր այլ առանցքի վրա։ Ուտոպիստ սոցիալիստները և հատկապես Շ. Ֆուրյեն նրան հետաքրքրել են կոոպերացիաների հետ ունեցած առնչություններում։ Եթե Անգլիայում կոոպերատիվ գաղափարների զարգացումը նա կապում էր «հանճարեղ» Ռ. Օուենի անվան հետ, որի՝ աշխատավորության նյութական և հոգևոր մակարդակների բարձրացման նախագծումները համընդհանուր ճանաչում ստացան իր իսկ կենդանության օրոք, ապա Շ. Ֆուրյեն ըստ արժանավույն չգնահատվեց։ Եվ դա այն պատճառով, որ նա ժամանակակիցների կողմից չընկալվեց ամենայն խորությամբ և որ նրա գաղափարական խորհրդանիշը շատ ավելի առաջ էր անցել իր ժամանակից։ «Ֆուրյեի հետ կատարվեց այն,— նշել է Վ. Տոտոմյանցը,— ինչ սովորաբար լինում է հանճարների հետ. որքան բարձր են նրանց մտածողությունն ու կանխատեսումները, այնքան քիչ են ըմբռնվում ժամանակակիցների կողմից։ Ռոբերտ Օուենի գործունեությունն առավել արդասաբեր և հանրաճանաչ էր այն պատճառով, որ այն տեղ գտավ

[1] В. Ф. Тотомианц, Утопия, М., 1917, с. 2.

մի երկրում, որտեղ կապիտալիզմի զարգացումն անհամեմատ վաղ ճանապարհ բացեց խոշոր ռեֆորմների համար, քան Ֆրանսիայում։ Ընդ որում, Օուենն ամենից առաջ պրակտիկ էր և տնօրինում էր մեծ կապիտալ՝ իր ձեռնարկումների համար։ Միայն Նյու-Լանարկի պրակտիկ փորձերից հետո... նա հասարակության առաջ հանդես եկավ որպես տեսաբան»[2]։ Սակայն Ռ. Օուենի և Շ. Ֆուրյեի ուսմունքները մի ընդհանրություն ունեին, այն, որ համընդհանուր տնտեսական պայքարն ու մրցակցությունը պետք է փոխարինվեին մարդկանց համերաշխ համագործակցությամբ ու արդարության ձգտումով։

Շ. Ֆուրյեի տնտեսական և սոցիալական սիստեմի իրականացման անհնարինությունը թելադրված էր Ֆրանսիայի տնտեսական և քաղաքական պայմանների պարտադրող ուժով։ Այս առումով Շ. Ֆուրյեն ծնվել է ժամանակից շուտ։ Ահա թե ինչու, եզրակացնում է Վ. Տոտոմյանցը, Շ. Ֆուրյեի երկրում քիչ հենակետեր կային նրա տեսական հայացքների համար։ Անտարակույս, ֆրանսիական հեղափոխության ազդեցությունը Շ. Ֆուրյեի վրա հսկայական է եղել և՛ նյութական, և՛ գաղափարական առումով։ Վ. Տոտոմյանցը տեղին է նկատում, որ վրիպում են այն հեղինակները, ովքեր հեղափոխության ժամանակ Շ. Ֆուրյեի նյութական կորուստների հարցը բարձրացնում են ծայրահեղության, փորձելով դրանով էլ բացատրել վերջինիս բացասական վերաբերմունքը հեղափոխությունների նկատմամբ, հետևապես նաև նրա հայացքների համակարգը։ «Իսկ ինչ վերաբերում է հեղափոխությունների նկատմամբ նրա դատապարտական վերաբերմունքին,— գրում է Վ. Տոտոմյանցը,— ապա դրա պատճառը շատ ավելի խորն է։ Միանգամայն կիսելով 1789 թվականի դեմոկրատական սկզբունքները, Ֆուրյեն միաժամանակ ամեն մի բռնակալական միջոցների ուժգին հակառակորդ էր»[3]։ Անդրադառնալով ֆրանսիական հեղափոխության և Շ. Ֆուրյեի հայացքների կապի խնդրին, Ա. Հովհաննիսյանը ցույց է տվել վերջինիս ձևավորման բարդ անցումները։ Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական կացությունն արդեն XVIII դ. վերջերին ստեղծել էր մի ամբողջ «սոցիատիվ» ուղղություն, որի պսակը դարձավ Շ. Ֆուրյեի ուսմունքը, իսկ Լիոնն այն կոնկրետ հասարակական միջավայրն էր, որը նրան դրդեց հասարակական նոր իդեալների որոնմանն ու պայմանավորեց դրա սոցիալական մտադրության բովանդակությունը[4]։

Վ. Տոտոմյանցի կարծիքով կապիտալիստական հասարակարգի ներհակությունները ոչ ոք այնքան փայլուն չի լուսաբանել, որքան Շ. Ֆուրյեն։ Ո՛չ XVIII դ. ֆրանսիական էնցիկլոպեդիստների ու լուսավորիչների հայեցությունը, ոչ էլ քաղաքատնտեսությունը (որի նկատմամբ Շ. Ֆուրյեն ընդհանրապես բացասական վերաբերմունք ուներ), որը ոչ այլ ինչ էր, քան «նոր արդյունաբերական և առևտրական դարի» դրվատանքը և «ճգնավորական բարոյականության փոխակերպումն իր իսկ հակադրությանը»[5], չէին համապատասխանում սոցիալական կառուցվածքի նրա նախասիրություններին։ Եվ ահա 1808 թ. հրատարակվում է Շ. Ֆուրյեի «Չորս շարժումների տեսությունը» աշխատությունը, որը Վ. Տոտոմյանցի կարծիքով նրա սոցիալական սիստեմի համառոտ շարադրանքն էր։ Տնտեսագետը նկատում է, որ «զարմանալիորեն նուրբ և հաջողված դիտողականության» հետ մեկտեղ այն պարունակում է նաև «միամիտ ու ֆանտաստիկ պնդումներ»։ Ըստ Վ. Տոտոմյանցի, եթե աշխարհի ծագման Շ. Ֆուրյեի հայեցությունը խարսխվում է «աստվածաշնչի ավանդություններին» վրա, ապա կործանման մասին գաղափարները կապիտալ էին Կանտի և Լապլասի էվոլյուցիոն տեսությունը և որ «սոցիալական զարգացման պատմական աստիճանների վերաբերյալ Ֆուրյեի դատողությունները»[6] պետք է խստորեն դիտարկվեն։ Սակայն պատմության վերաբերյալ Շ. Ֆուրյեի հայեցության մեջ ուրվագծվում է հասարակության զարգացման դիալեկտիկան,

2 В. Ф. Тотомианц, Шарль Фурье и кооперация, М., 1918. с. 1.

3 Նույն տեղում, էջ 2։

4 А. Р. Иоаннисян, Генезис общественного идеала Фурье, М., 1939, с. 44.

5 В. Тотомианц, Шарль Фурье и кооперация, с. 3.

6 Նույն տեղում, էջ 6։

որպես ցածրից դեպի բարձր աստիճանն ընթացող պրոցես, որն ունի ինչպես իր սկիզբը, այնպես էլ վերջը[7]։ Ֆ. Էնգելսը գրել է, թե «Նույնպես դիալեկտիկորեն նա (Ֆուրյեն— Ռ. Ս.) պնդում է, ի հակակշիռ մարդու կատարելագործման անսահման ընդունակության վերաբերյալ ֆրազների, որ պատմական յուրաքանչյուր ֆազիս ունի իր վերընթաց ու վարընթաց գիծը, և իր այդ հայացքը նա է՛լ ավելի է զարգացնում ամբողջ մարդկության ապագայի նկատմամբ։ Կանտի նման, որը բնագիտության մեջ մտցրեց երկրագնդի ապագա կործանման գաղափարը, Ֆուրյեն պատմության իր ըմբռնման մեջ մտցրեց մարդկության ապագա կործանման միտքը»[8]։

Վ. Տոտոմյանցը թեև տարակուսանք է հայտնում Շ. Ֆուրյեի հասարակաշինության նախագծի վերաբերյալ, այնուամենայնիվ, դրանում նշում է նաև օգտակար և կիրառության համար պիտանի որոշ կողմեր։ Շ. Ֆուրյեին նա մեծարում է որպես սոցիալական քննադատի, որն այնքան վարպետությամբ ու խորությամբ բացահայտել է կապիտալիստական հարաբերությունների իրական բովանդակությունը։ Երբ Շ. Ֆուրյեն «պատմական անորոշ վարկածներից կանգնում է ժամանակակից հիմքի վրա, հատկապես առանձնանում է նրա քննադատական և անալիտիկ բնույթի բացառիկ տաղանդը։ Նա շատ հեշտությամբ ապացուցում է, որ իր ժամանակակիցների հսկայական մեծամասնությունը տառապում է այն հաստատություններից և տնտեսական պայմաններից, որոնցում ապրում է»[9]։ Վ. Տոտոմյանցը, մեծարելով ֆալանստերների վերաբերյալ Շ. Ֆուրյեի ուսմունքը և անդրադառնալով դրանց ներքին կառուցվածքի մանրամասներին, միաժամանակ խոսում է այդ հաստատությունների անկատարության ու ներքին հակասության մասին։ Սակայն կարևորը ոչ այնքան դա է և ոչ էլ ֆալանստերների իրագործման պրակտիկ անհնարինությունը, որքան այդ ուսմունքի ներքին ուղղվածությունը՝ վերափոխելու տնտեսական ու սոցիալական առկա հարաբերությունները։ Սա է այն գերագույն սկզբունքը, որի վրա Շ. Ֆուրյեն ձևում է իր հայեցությունն ապագա հասարակության վերաբերյալ։ Ուշագրավ է, թե այս առումով Վ. Տոտոմյանցը ինչպես է բնութագրում ֆրանսիացի մեծ ուտոպիստ-սոցիալիստին։ «Շարլ Ֆուրյեն,— գրել է նա,— իբրև սուրբ ապագայի մարգարե, իրեն պսակել է անթառամ փառքով։ 19-րդ հարյուրամյակի շեմին նրա կենդանի և արգասաբեր ոգին բոլոր ուղղություններով թափանցում է մութ շրջապատը։ Սոցիալական շարժումն արդեն վաղուց ի վեր և մինչև վերջին ժամանակներս կուլտուրական բոլոր երկրներում նրան համարում է ամենատաղանդավոր ներկայացուցիչներից մեկը»[10]։ Նա վկայակոչում է Ժան Ժորեսի այն խոսքերը, որ «այն ժամին, երբ Նապոլեոնը երազում էր սրի միջոցով ստեղծել մարդկանց համախմբություն, այն ժամին, երբ նրա մեծ հակառակորդ Անգլիան իր հերթին երազում էր այդ համախմբությունը ստեղծել առևտրական գերիշխանությամբ, այն ժամին, երբ հրանոթի մոտ վիճարկվում էր իշխանությունը մարդկության վրա, որն ազատագրվել էր նախորեին և ընկել նոր ստրկության մեջ, այդ ժամանակ Ֆուրյեն երազում էր մարդկանց համախմբության մասին, որը պիտի իրագործվեր ոչ թե ռազմական բռնության ուղիով, առևտրական շահագործման, ֆրանսիական դաժանության կամ անգլիական չարչիականության ու խորամանկության, այլ ազատ անհատների ասոցիացիաների ընդլայնման միջոցով...»[11]։

Վ. Տոտոմյանցի դավանանքը Շ. Ֆուրյեի ուսմունքի հետ եզրեր է հայտաբերում այն ուղեգծերում, որոնք իբրև սոցիալական ռեֆորմատորի առնչվում են կոոպերատիվ շարժման հետ։

1915 թ. մարտին Կիևի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը

---

7 Шарль Фурье, Избр. соч., т. 3, М., 1954, с. 94.

8 Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1953, էջ 51։

9 В. Тотомианц, Шарль Фурье и кооперация, с. 7.

10 Նույն տեղում, էջ 16։

11 Նույն տեղում։

Վ. Տոտոմյանցին «Աշխատանքի հաշտեցումը կապիտալի հետ (մասնակցությունը շահույթին և կոպարտներշիպը)» հետազոտության[12] համար շնորհում է քաղաքատնտեսության և վիճակագրության դոկտորի գիտական աստիճան։ Գրքի վերնագիրն արդեն շատ բան է հուշում հեղինակի սոցիալական փիլիսոփայության և նրա տնտեսական ծրագրի ուղեգծերի մասին։ Ընդհանրապես, նկատում է Վ. Տոտոմյանցը, տնտեսական ձևերի հաջորդափոխությունը բարդ ու երկարատև էվոլյուցիոն պրոցես է, հնի և նորի տարրերը սինթեզող բազմաթիվ ձևերի միջնորդվածության։ «Տնտեսական կազմակերպության ձևերը բարդ են, բազմազան,— գրում է նա,— և գտնվում են մեկը մյուսի հետ հաջորդական կապի մեջ։ Ինչպես որ բուսական աշխարհից կենդանականին անցումը կատարվում է մի շարք միջանկյալ ձևերով, որոնց դժվար է ասել բույս է դա, թե կենդանի, այնպես էլ տնտեսական կյանքում առկա են բազմաթիվ անորոշ ձևեր, որոնց ըստ սեփական հայեցության կարելի է դասել այս կամ այն կատեգորիային»[13]։ Իսկ քանի որ հասարակության պատմությունը տնտեսաձևերի հաջորդափոխության, դրանց կատարելագործման պատմություն է, ուստի և նոր տնտեսաձևերը մեկուսացած իրողություններ չեն և հաճախ դրանց նախատիպերը կարելի է հանդիպել հասարակության վաղ շրջաններում՝ ամենատարբեր ձևերով։ Այս իմաստով էլ նա շահույթին մասնակցության սիստեմի և դրա կատարելագործված ձևի՝ կոպարտներշիպի, ինչ-ինչ տարրեր փնտրում էր և՛ հռոմեական կայսրության, և՛ միջնադարյան Եվրոպայի հողագործության մեջ, դրանց առկայությունը հաստատող վկայակոչումներ անելով Ֆ. Քենեից, Ա. Յունգից, Ա. Սմիթից, Ս. Սիսմոնդուց և այլ հեղինակներից։ Սակայն, ըստ նրա, եթե վաղ շրջանի մասնակցության սիստեմը խարսխված էր բնատնտեսության վրա, ապա ժամանակակից ձևերն իրենց հիմքում ունեն կապիտալիստական տնտեսությունը։ Ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ ենթադրում են արտադրողներին սեփականատեր դարձնելու փորձեր[14]։

Վ. Տոտոմյանցը հակված չէր ընդունելու սոցիալական այն հայեցությունը, ըստ որի հակամարտություններն ու բռնությունները հասարակության մշտական ուղեկիցներն են։ Հենվելով Փարիզի «Առաջավոր փորձի փոխանակման միջազգային ինստիտուտի» սոցիալական հարցումների վրա, վկայակոչումներ անելով գերմանացի սոցիոլոգ Ռատցենհոֆերից, ֆրանսիացիներ Ս. Նովիկովից, Շ. Ռիշեից, ավստրիական «էթիկական ընկերության» անդամ Վ. Բերներից՝ նա հանգում է մեթոդոլոգիական ուղեցույց ակնկալող այն հետևությանը, ըստ որի «ուժի և բռնության մեծագույն դերը ժամանակավոր է և պետք է աստիճանաբար իր տեղը զիջի փոխադարձ հարաբերությունների խաղաղ ձևերին»[15]։

Հարցի այսպիսի դրվածքը ոչ միայն նոր է, այլև իր էությամբ աղերսներ ունի սոցիալիստական մտքի այնպիսի ներկայացուցիչների հայեցության հետ, ինչպիսիք են Սեն-Սիմոնը (որն աշխատանքի և կապիտալի հակասության որևէ հիմք չէր տեսնում), Շ. Ֆուրյեն (որը միություն էր առաջարկում աշխատանքի, կապիտալի և տաղանդի միջև), Լ. Բլանը (որը նույնիսկ ամենաչափավոր ձևով դասակարգային պայքարը չէր դիտում որպես բանվորների վիճակի բարելավման միջոց)։ Այն ընդհանուր կետը, որում վերոհիշյալ հեղինակները միավորվում են Վ. Տոտոմյանցի հասարակահայեցության մեջ, դա հասարակական վերակառուցման ռեֆորմատորական նպատակներն են։ Ինչպես հայտնի է, վերջիններիս իրականացման առումով նա կարևոր տեղ իր հատկացնում կոոպերատիվ հաստատություններին։ Սակայն նրա կարծիքով առավել բարձրագույն ձևը բանվորների մասնակցությունն է շահույթներին և կոպարտ-

12 Գրքի 1919 թ. երկրորդ հրատարակության առաջաբանում խմբագրությունը թեև չի կիսում հեղինակի տեսական եզրահանգումները, այնուամենայնիվ, դրանք հետաքրքրական է դիտում հարցի պատմության և փաստական նյութի համակարգման առումով (В. Ф. Тотомианц, Участие в прибыли и рабочее акционерство, М., 1919, с. X).

13 В. Ф. Тотомианц, Примирение труда с капиталом, Берлин, 1923, с. 60.

14 Նույն տեղում, էջ 9—12։

15 Նույն տեղում, էջ 27։

ներշիպը, որը ենթադրում է ոչ միայն բանվորների մասնակցությունը շահույթին, այլև ձեռնարկատիրության իրականացում[16]։

Մասնակցության սիստեմի կարևորության և նրա անհրաժեշտության հիմնավորման առումով Վ. Տոտոմյանցն առաջնությունը հատկացնում էր անգլիացի մաթեմատիկոս և տնտեսագետ Ջարլզ Բեբիջին (հետագայում հարցի տեսական մշակմանն այս կամ այն չափով անդրադարձել են Ս. Սիսմոնդին, Ջ. Միլը, Տ. Տորնտոնը, Ս. Ջեվոնսը, Ժ. Գոդենը, Գ. Շմոլերը, Ա. Մարշալը, Լ. Պրայսը և շատ ուրիշներ)։ Այդ հեղինակների հայեցությունը կարելի է ընդհանրացնել մի բանաձևմամբ, որը Վ. Տոտոմյանցը կատարում է գերմանացի փիլիսոփա Ֆ. Պաուլսենի «Էթիկայի համակարգ» աշխատությունից արված այն վկայակոչումով, թե իբր շահույթին մասնակցության սիստեմն ու կոպարտներշիպը կոչված են ամբողջապես վերակառուցելու գոյություն ունեցող դասակարգային հարաբերությունների ողջ համակարգը[17]։

Վ. Տոտոմյանցի գնահատումներն ու վկայակոչումները բացահայտում են նրա հայացքների ուղղությունն ու չափանիշները, որոնց վրա խարսխված է նրա սոցիալական դավանանքը։

Ժամանակի առանձին գիտնականներ հակառակ փաստարկներով փորձում էին ցույց տալ մասնակցության սիստեմի ներքին հակասականությունը։ Մասնավորապես Գ. Ֆրոմերը գտնում էր, որ այն ոչ թե ձեռնարկատիրության նոր ձև է, այլ լոկ աշխատավարձի, որը կարող է օգտագործվել ամեն մի ձեռնարկության մեջ և որն ունի ոչ թե իրավական, այլ բարեգործական բնույթ և բանվորների որոշ մասի համար արիստոկրատական միտում։ Այլ հեղինակներ այն կարծիքին էին, որ մասնակցության սիստեմն առավել նպատակահարմար է օգտագործել արհեստագործական տիպի ձեռնարկություններում, ուր կապիտալի բաժինը փոքր է, քանի որ խոշոր ձեռնարկություններում հնարավոր չէ ճիշտ որոշել աշխատանքին մասնակցությանը համապատասխան շահույթի չափը։ Մի երրորդ կարծիք մասնակցության սիստեմը չէր դիտում որպես գործադուլները վերացնելու և ընդհանրապես սոցիալական ներհակություններ մեղմելու հիմնավոր միջոց և այլն։ Եվ բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն հեղինակը որևէ բացասական վերաբերմունք է հայտնում մասնակցության սիստեմի և կոպարտներշիպի վերաբերյալ, Վ. Տոտոմյանցը դրսևորում է գաղափարական տարաձայնություն։ «Ինչպես շահույթներին մասնակցության սիստեմի և կոպարտներշիպի քննադատության վերաբերյալ մեր առարկություններին,— գրում է Վ. Տոտոմյանցը,— մենք շահույթին մասնակցությունը համարում ենք ոչ բավարար, իսկ կոպարտներշիպը կամ բանվորական ակցիոներությունը՝ սոցիալական ռեֆորմի հզորագույն միջոցներից լոկ մեկը։ Կոպարտներշիպը, իհարկե, համադարման չի և սոցիալական բոլոր չարիքներից չի կարող բուժել։

Ասել, թե կոպարտներշիպի տարածվելով արդյունաբերական կյանքից ամեն մի թյուրիմացություն կվերանա՝ նույնպես չի կարելի։ Երբեմն տեսարաններ են բռնկվում նաև լավագույն ընտանիքներում։ Այնուհանդերձ կոպարտներշիպը կարող է մեծապես օժանդակել ձեռնարկատերերի և բանվորների միջև հարաբերությունների բարելավմանը։ Այդ հարաբերությունների լավացման առումով մի այլ, առավել հարմար արտաքին միջոց մարդկությունը դեռևս չի մտածել»[18]։ Ակներև է, որ Վ. Տոտոմյանցը շահույթին մասնակցության սիստեմի և կոպարտներշիպի սկզբունքը ենթարկել է մի այնպիսի պայմանականության, որն ըստ էության բացառում է որևէ այլ հնարավոր միջոցի առկայությունը։ Իսկ երբ հասարակական այս կամ այն երևույթը բացարձակացվում է, ապա մյուս երևույթների վերլուծությունը ստանում է միակողմանի բնույթ՝ հարմարեցվելով ելակետային գաղափարին։ Թերևս դրանով պիտի բացատրել, որ Վ. Տոտոմյանցի մոտ տնտեսաձևերի հաջորդափոխությունը

16 Նույն տեղում, էջ 9։

17 Նույն տեղում, էջ 223—224։

18 Նույն տեղում, էջ 234։

ներկայացված է պարզագույն սխեմայի ձևով, որը դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին ուրվագծել էր Դ. Մացիանին՝ «ստրուկից դեպի ճորտություն, ճորտությունից վարձու բանվոր և վերջինից ազատ մասնակից»[19]։

Տնտեսաձևերի այս միագիծ ձևակերպումները չէին կարող չարտահայտվել նաև տնտեսական կատեգորիաների Վ. Տոտոմյանցի ըմբռնումներում։ Շահույթը դիտելով որպես երկու ուժերի՝ կապիտալի և աշխատանքի, գործողության արդյունք, նա միաժամանակ դրա գոյությունը պայմանավորում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են բնությունը, շուկայի վիճակը, նախորդ սերունդների հետևողական առաջընթացը, գիտական հայտնագործությունները, հումքի և մեքենաների մեջ մարմնացած այլ բանվորների աշխատանքը, մտավոր գործունեությունը և այլն։ Հազիվ թե քաղաքատնտեսության պատմության մեջ գտնվի որևէ ուղղություն, որի շրջանակում հնարավոր չլինի տեղադրել Վ. Տոտոմյանցի՝ շահույթի բացատրության այս կամ այն տեսակետը։ Ընդհանրապես շահույթի առաջացման ու եկամուտների բաշխման հարաբերությունների հարցը քաղաքատնտեսության պատմության հանգուցային խնդիրներից է, որը ստացել է տեսական բազմաթիվ հիմնավորումներ և լուծումներ։

Վ. Տոտոմյանցի հայեցության մեջ ահա թե ինչպիսին է հարցի դրվածքը։ «Ժամանակակից տնտեսակարգում,— նկատում է նա.— շահույթը հանդիսանում է մի ամբողջ շարք գործոնների գործողության արդյունքը, գործոններ, որոնց մեջ ամենաակտիվ տեղը պատկանում է բանվորի աշխատանքին և ձեռնարկատիրոջ տաղանդին։ Ժամանակակից խոշոր կապիտալիստական ձեռնարկություններում վճռական դերը խաղում են «արդյունաբերության կապիտանները»[20]։ Այստեղից էլ արդեն հետևում է նրա այն տրամախոսությունը, թե «կապված ձեռնարկատիրոջ այնպիսի մեծ դերի հետ... նշանակալից վարձատրության կամ շահույթի մի մասին կապիտալիստի, կառավարչի, դիրեկտորի, կառավարչության անդամի, ինժեների և տեխնիկի իրավունքը չի կարող կասկածի տակ առնվել։ Չէ որ այդ շահույթը ստեղծվում է նրա ադմինիստրատիվ-առևտրական տաղանդով, նրա կատարելագործություններով ու հայտնագործություններով, և եթե նա որպես պարգևատրություն վերցնում է շահույթի նշանակալից մասը. ապա դա արվում է ոչ թե ի հաշիվ աշխատանքի կամ հասարակության, այլ նրա կատարելագործություններով ու հայտնագործություններով ստեղծված արժեքների գումարից»[21] և «երբ ձեռնարկատերը համընկնում է կապիտալիստի հետ. որը հաճախ է լինում, ապա վարձատրությունն ավելի է մեծանում»[22]։ Այսպիսին է տնտեսագետի հայեցության տիրույթը, որը համընկնում է ինչպես XIX դ., այնպես էլ XX դ. սկզբի բուրժուական տնտեսագիտական մտքի չափանիշներին։

Հարցը թերևս այդպես էր դնում Ջ. Միլը, ըստ որի, աշխատում են ինչպես բանվորները, այնպես էլ կապիտալիստները։ Այստեղից էլ արդեն այն եզրակացությունը, որ նրանցից յուրաքանչյուրը ստանում է իր բաժինը։ Բանն այն է, որ արհեստագործական բնույթի ձեռնարկություններում, իբրև արտադրության գործոնի, կապիտալի տեսակարար կշիռն ավելի փոքր է, քան աշխատանքինը։ Ուստի խոշոր ձեռնարկություններում, ուր մեծ է կապիտալի բաժինը, շատ է նաև կապիտալիստի ստացած շահույթը։ Հարցի դժվարությունն աշխատանքի չափի և շահույթի չափի չափակցելիության ճիշտ որոշման մեջ է։ Վ. Տոտոմյանցն առավել հինը և արդարության սկզբունքին համապատասխանողը համարում է շահույթի բաշխման այն կարգը, որն առաջարկում էր Շ. Ֆուրյեն ֆալանստերների ներսում, ըստ որի $^{5}/_{12}$ մասը պետք է բաժին ընկներ աշխատանքին, $^{4}/_{12}$-ը՝ կապիտալին և $^{3}/_{12}$-ը՝ տաղանդին կամ «տեսական և պրակտիկ գիտելիքներով» օժտված մարդկանց։ Հարկ է նկատել, որ Շ. Ֆուր-

19 Նույն տեղում, էջ 227։
20 Նույն տեղում, էջ 237։
21 Նույն տեղում, էջ 238։
22 Նույն տեղում։

յեի գաղափարներն իրենց հետևորդներն են ունեցել տարբեր երկրներում։ Եղել են նաև դրանց իրականացման պրակտիկ ձեռնարկումներ, սակայն շատ քչերն են, որ «առանձնահատուկ բարենպաստ» պայմանների հետ կապված ունեցել են երկարատև ու կայուն հաջողություն[23]։ Աշխատանքների կազմակերպման բանվորական ակցիոներական ձևն էին ենթադրում նաև Ժ. Լեկլերի և Գ. Թոմսոնի ձեռնարկությունները, որոնց նկարագիրը հանգամանորեն տալիս է Վ. Տոտոմյանցը։ Վերջինս համոզված էր, որ այդ սկզբունքներով աշխատող կոպարտներշիպը «պետք է մեղ տանի արդյունաբերական կյանքի այնպիսի վերափոխմանը, որ այդ կյանքի բոլոր մասնակիցները կարողանային յուրացնել տնտեսական պայմանների ըմբռնումը, որ նրանք աշխատանքի արդյունքներում ունենային իրական մասնակցություն, որը աշխատավորությանը հնարավորություն կտար օգտվելու իր դարի քաղաքակրթության բոլոր բարիքներից... Որպեսզի կապիտալի վրա վերահսկողությունը, որն իրականացվում է գործարանում բանվորների կողմից, տա ռեալ արդյունքներ, անհրաժեշտ է, որ այն իրականացվի իբրև գործարանի ամբողջ բանվորական անձնակազմին պատկանող վերահսկողության մի մասի՝ ցածրից մինչև բարձրը և՛ բանվորները, և՛ ծառայողները, և՛ տասնորդները, և՛ ինժեներները, և՛ կառավարիչները— բոլորը պետք է միմյանց նայեն որպես ընդհանուր մեքենայի անհրաժեշտ և կարևոր մասերի, ընդհանուր շահերով»[24]։ Իհարկե հարցադրումն ինքնին հետաքրքրական է, սակայն տնտեսական զարգացման իրական պրոցեսները չի արտացոլում։ Լինելով սոցիալ-ռեֆորմիստ, Վ. Տոտոմյանցը նպատակ ուներ առանձին ձեռնարկություններում տնտեսական դեմոկրատիայի սկզբունքների արմատավորման միջոցով հասնելու կապիտալի և տնտեսության վրա համընդհանուր հասարակական վերահսկողության։ Եվ եթե ավելացնենք այն հանգամանքը, որ Վ. Տոտոմյանցի կարծիքով կոոպերատիվներն իրենց տնտեսական գործունեության ընթացքում պետք է գործեն նույն մեթոդներով, ինչ և կապիտալիստական ձեռնարկությունները[25], ապա ակներև է դառնում բանվորական ակցիոներության իրագործման ուտոպիական բովանդակությունը։

Հասարակական զարգացումը Վ. Տոտոմյանցի կարծիքով ենթադրում է տնտեսաձևերի դիալեկտիկական հաջորդափոխություն, որը, սակայն, չի բացառում նախորդ ձևերի որոշ տարրերի կրկնությունն ու պահպանումը, դրանց հետագա զարգացումը։ Խոսքը վերաբերում է միջնադարյան ցեխային ոգու առանձին կողմերի վերածնությանը։ Այս առումով էլ նա նկատում է, որ եթե կոպարտներշիպը ուշադրություն չդարձնի դաստիարակչական կողմին և միայն սահմանափակվի նյութական գործոնով, ի դեմս շահույթներին բանվորների մասնակցությանը, ապա այն կմնա լոկ որպես կապիտալիստական արդյունաբերական համակարգի ձևափոխված տեսակը, որը հազիվ թե որևէ էական նշանակություն ունենա։ Հետևաբար, եզրակացնում է Վ. Տոտոմյանցը, «ոչ թե մասնակցությունը շահույթին ինքնին, այլ անցումն առավել արդարացի տնտեսական սիստեմի, որտեղ բոլորը ծառայում են մի ընդհանուր նպատակի և համերաշխորեն աշխատում են հանուն ընդհանուր բարեկեցության— այսպիսին է կոպարտներշիպի խնդիրը։

Որոնք էին ցեխային սիստեմի բնորոշ գծերը։ Նախ աշակերտին ծանոթացնում էին աշխատանքի ամենատարբեր պրոցեսներին՝ կապված տվյալ արհեստի հետ, այնպես որ ժամանակի ընթացքում ամեն մեկը կարող էր դառնալ վարպետ և ցեխի լիարժեք անդամը։ Եվ երկրորդ՝ ցեխի անդամի աշխատանքի որակը ոչ թե անձնական հայեցության, այլ ամբողջ ցեխի պատվի հարցն էր, այդ պատճառով էլ ցեխն ինքն էր պատժում վատ և անփույթ աշխատանքի համար»[26]։

---

23 М. Зильберфарб, Социальная философия Шарля Фурье, М., 1964, с. 223.

24 В. Тотомианц, Примирение труда с капиталом, с. 235.

25 В. Тотомианц, Основы кооперации, Берлин, 1923, с. 48.

26 В. Ф. Тотомианц, Примирение труда с капиталом, с. 236.

Ցեխային կազմակերպությունների հանդեպ ունեցած վերաբերմունքի հարցում Վ. Տոտոմյանցը հիշեցնում է Ս. Եղիազարյանին, որը հակված էր գունազարդելու համքարական միությունները, որպես «պաուպերիզմի դեմ փայլուն միջոցի», որպես «մրցակցությունից ազատ հավասարության ու եղբայրության կազմակերպություններ», որոնցում «դեմոկրատական ոգին ներծծված էր ներքին կյանքի բոլոր ոլորտները»[27]։ Վ. Տոտոմյանցի համար կապիտալիզմի պայմաններում նույնատիպ կազմակերպություն էր կոպարտներշիպը, որը ոչ այլ ինչ էր, քան «ցեխային նոր սիստեմի» սկիզբը, որը, ըստ նրա, համապատասխանելով քաղաքակրթության ընթացքին, նպաստում էր բանվորների և ձեռնարկատերերի շահերի միաձուլմանը, վարձատրության չափը կախման մեջ էր դնում շահույթից, բանվորներն աստիճանաբար կդառնային ձեռնարկատերեր, կբարձրանար աշխատանքի արտադրողականությունը, կվերանային գործադուլները և դասակարգային ու սոցիալական ներհակությունների լուծումը կիրականացվեր ոչ թե բռնի, այլ խաղաղ մեթոդներով[28]։

Տնտեսական տարբեր հարցերի Վ. Տոտոմյանցի մեկնաբանությունների վրա նկատելի է տնտեսագիտության պատմական դպրոցի և հատկապես նրա պատմաէթիկական թևի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Գ. Շմոլերի ազդեցությունը, որին մի անգամ չէ, որ նա վկայակոչում է։ Գերմանացի տնտեսագետը պնդում էր, թե «աշխատանքի պրոբլեմը» կարելի է լուծել միայն սոցիալ-էթիկական պլանով և գտնում, որ ժամանակակից հասարակարգը ցնցումներից զերծ պահելու համար անհրաժեշտ է ցածր դասակարգերին մասնակից դարձնել առաջադիմության արդյունքներին, որում հոգեբանական և էթիկական գործոնները պակաս դեր չունեն, քան տնտեսականը[29]։

Ինչպես ակներև է, Վ. Տոտոմյանցի հարցադրումներն ու վերլուծությունները համահնչուն են դարասկզբի տնտեսագիտական մտքի կոոպերատիվ հայեցության տեսական ուղեգծումներին։

ЭКОНОМИЧЕСКИЕ ВОЗЗРЕНИЯ ВААНА ТОТОМЯНЦА

Р. Н. САРИНЯН

Резюме

Ваан Тотомянц является одним из известных представителей армянской экономической мысли начала века. Многочисленные работы о кооперации принесли широкое признание автору не только в России, но и в странах Европы. Он многократно обращался к социальным воззрениям утопистов-социалистов как представителей нового ассоциативного направления, в частности, к учению Фурье. Воззрения В. Тотомянца как социального реформатора созвучны учению Фурье в вопросах кооперативного движения.

Критический анализ воззрений В. Тотомянца об участии рабочих в прибылях вскрывает противоречивость его мировоззрения.

---

27 С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891, с. 59.

28 В. Ф. Тотомианц, Примирение труда с капиталом, с. 242—249.

29 Б. Селигмен, Основные течения современной экономической мысли, М., 1968, с. 30.